

ռասնօրեայ պահքեր. մին Չատկէն յառաջ, եւ միւս երկուքը՝ նախ քան Վարդավառն ու Ծնունդը:

Ա. Չատկականը, որ ընդհանուր էր բոլոր քրիստոնէից, օրերու թուով անհաւասար էր ի սկզբան: Ս. Երանոսի վկայութեամբ՝ Բ դարուն ոմանք կը պահէին մի օր, ոմանք երկու, ոմանք աւելի, եւ ոմանք քառասուն ժամ (Եւս. 399): Երկու օրն ըստ Տերտուղիանոսի՝ աւագ ուրբաթն ու շաբաթն էին (Կարբ. Բ, 2139): Իսկ Ք դարուն՝ Դիոն. Աղեքսանդրացին եւ «Վարդապ. Առաքելոց» մեկ կօրնեակ կը դնեն (անդ, 2140) հաւանօրէն հրէական եօթնօրեայ բազարջակերաց թուով (Բ Օր. ԺԶ, 3): Քառասնօրեայ պահքը կ'երեւի Ք դարուն, նախ Նիկիոյ ժողովին կանոններէն յիշուած (Ե), եւ յետոյ ուրիշ Հայրերէ (Կարբ. Բ, 2141-2): Հետեւաբար հայ նորածնեալ եկեղեցին ալ զայն սկսաւ պահել այս վերջին չափով: Ս. Սահակայ կանոնաց մէջ ակնարկութիւն կը լինի «քառասնորդացն զատկի» (111), զոր Տեսիլն ալ կը յիշէ (46): Նաեւ Մանդակունին անտես չի թողուր «զպահս քառասնկորդացն», յարելով՝ թէ ի խորհուրդ Յիսուսի, Մովսեսի եւ Եղիայի քառասնօ-